ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԿՈՄԻ ԵՎ ՀԱՅԿՈՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՕՐԳԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԿՈՄԻ ԵՎ ՀԱՅԿՈՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՕՐԳԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԿՈՄԻ ԵՎ ՀԱՅԿՈՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՕՐԳԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱՎԱՐ

ՎԱԳԱՐՇԱՊԱՏԻ ԶԱՐԳԱՑՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹ

(ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ)

ՈՒՐԱԽ

ԳՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՈՒՐԲԱԹ, ՇԱԲԱԹ ԵՎ ԿԻՐԱԿԻ

Ի ՎԱՂՈՒՆ ՀԱՄԱՐ ՄԵՐ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՈՐՈՇԵՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՏՑՆԵԼ ԹԵՐԹԻ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐՈՒՄ։ ՆՈՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱԶՄՈՒՄ ՄՏՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՏՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴԻԿ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՄԵՐԻ ՀԱՅՏՆԻ ՊԱՏՎԱԿԱՆ ԱՆՀԱՏՆԵՐ։

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ ԹԻՎ 12

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՄԵՐԻ ՀԱՅՏՆԻ ՊԱՏՎԱԿԱՆ ԱՆՀԱՏՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒԹՅԱՆ

ժողովի դիմ ներկայացուցած ժամ շէր եղեր, ինչպէս նաեւ ներկայ չէին եղեր ոչ ոք ի պատասխանատուներէն։ Ուստի ժողովը ստիպուեցաւ յետաձգել իր գործունէութիւնը մինչեւ ժամ 2 ½։ Ժամուն ներկայ էին 30 անդամներ։ Ժողովի նախագահ ընտրուեցաւ Տ. Գրիգոր Տէր-Մկրտչեան։ Ապա ներկայացուցին իրենց պաշտօնական տեղեկագրութիւնները Տ. Գրիգոր Տէր-Մկրտչեան, Տ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեան, Տ. Գրիգոր Տէր-Գրիգորեան, Տ. Գրիգոր Տէր-Ստեփանեան, Տ. Գրիգոր Տէր-Ղազարեան, Տ. Գրիգոր Տէր-Ստեփանեան, Տ. Գրիգոր Տէր-Գրիգոր

ծունէութեամբ կը տեսնուի վերջին կոստանդնուպոլսոյ զանազան թաղերու մէջ: Մայրաքաղաքիս 20 – 30-էն պատուաւոր ազգային և օտար անձանց կարգադիր մասնախումբ մը կազմուած է ընդ նախագահութեամբ վսեմաշուք Գրիգոր Օտեան էֆէնտիի և ընդ բարձր հովանաւորութեամբ տէրութեան առաջին նախարար բարձրապատիւ Ասրիճի փաշայի: Հանդէսը $^{16}/_{28}$-ին կիրակի գիշեր տեղի պիտի ունենայ Պօէյիւքտէրէի գեղեցիկ ծովափունքը Մըսըրլը վսեմափայլ Օսիկ պէյի գեղազուարճ պարտիզին մէջ, ուր պիտի դիմէ հասարակութիւնը հանդիսիս համար յատկացեալ 3 հատ մեծ շքեղանաներով և նուագածուաց հաճոյական ընկերակցութեամբ: Առ այժմ այսքանս բաւական համարելով կը խոստանամ մանրամասն գրել երբ հանդէսը տեղի ունենայ և անոնց որք մեր ըրած դիտողութիւնները կամ տուած տեղեկութիւնները կիսատար կը գտնեն Արարատեան Գ. տեղեկագրին նկատմամբ, խորհուրդ կուտանք որ ամբողջ ընթերնուն զայն որպէս զի որոշ գաղափար մը ստանան:—

Ա. Ը. Ե. Ա.

Կ Ո Ղ Բ

Ա ղ ա յ գ ա զ է թ չ է ի

Հընչանք էսօր թէ տէրտէրից և թէ գիտնակ մարդից ես համչայ լսած էի, որ համբերութիւնը և կարգալ գրելը լաւ բանա. բայց ընցած օր մի կազեթի մէջ «մի քանի մաքեր» վերնագրով մի յօդուած կարդացի Գ. Գ.ի ստորագրութեամբ, ձշմարիտըն ասեմ, ինձ շատ գուր էկաւ էն գրվածը: Ես էլ ինձու գեօրայ քիչ-միչ սուր թուր թվանգ բանացնել գիտեմ: ամմայ շատերը ինձ միշտ ղընամիշ անում նախատում էին ասելով, «էդ վատ սովորութիւնա. սուր բանացնել հայ քրիստոնի բան չէ»: Ես էլ հախ ու նհայս նրանց խօսքերն ընդունում էի: Օղօրմի Գ. Գ.ի հօրը. նրա ասած բանները ինձ հոգի և իրաւունք տուեց, այսուհետև ես նրա մաքին խօսքին պէտք ա հետևեմ: Ես իմ աչքով տեսնում եմ, ով որ սուր թուր ունի, ով որ քաջութիւն ունի, նա ապրում է և նրանից գող աւազակ մարդիկ վախենում են, և ով որ խեղճ խաւնարա, նա միշտ կողոպտվումա սպանվում: Ահա սաբութ իմ խօսքին, որ անցեալ տարի կռուին մի քանի ձիաւոր քուրդ խալֆալու խօշխաբարցի հայերին սպանին: Երկու գեղ չկարողացան իրանց գլուխը պահել մի քանի քուրդ ձիաւորներից, բայց ղօչաղ Դաշբուռունցիք, իրանց գեղը հարամաւ բերանը, հազար ձիաւոր քուրդ սկրտ չարին որ նրանց վրա տան. սաղ Սուրմալու փախաւ, նրանք մենակ ձնացին իրանց տեղը: Չմին էն կողմ ձնայ, մեր էս տէրտէրները մեզ բէհինհան արել են, հէնց ասում են «ով որ սուր առցէ, սրով անկցի.» աղբէր, մենք ձնացել ենք շիվար էդ տէրտէրների ձեռքը, մեզի ուզում են հէնց տաւար հայվանի պէս ապրենք իզուր մեռնենք:—

Մի չար կատու սպանող մարդին քցում են ամիսներով ապաշխարանքի տակ, սրա գեօրայ պէտք ա իմանալ թէ, երբ որ մարդ սպանի, որքա՞ն ապաշխարանք պտի քաշէ: Տնաւերները հախին նհախին ասում են «մարդ մի սպանէք» բաս որ տունս տեղս Թալանեն ինձ էլ սպանեն, չէսօ՞մ...:—

Ես էլ իմանում եմ որ կարգալը, ուսումը գիտնականութիւնը, շատ լաւ բանա: Իմ հարևանը պլազդ անօրէն քուրդ ու Թուրքա. նրանք կոպիտ վայրենի գող աւազակ են, ընչանք դու քո գիտնականութիւն, իմաստութիւնը բանացնես, մէկիլ տեսար տունդ տեղդ Թալան գնաց: Բապտիզին, Ալաչկերտցին էդպէս խեղճ խոնար ծնային, որ կոտորվեն Թալանվան: Քուրդն ի՞նչ գիտի այրն ու բենը, խելք իմաստութիւնը, նրա խելքը, միտքը հրէն իր սրի Թրի վրայ է, գիշեր-ցերեկ ուզումա սրանը բրան Թալանի սպանի, և էդպէս էլ անում են միշտ:—

Տէր հայրեր, ընչանք հիմի մեզի խրատեցիք քարոզեցիք «համբերել». դուք էլ տեսաք ձեր քարոզի պտուղը, դուք էլ հասկացաք, որ ձեր բռնած ճանապարհն ճնաս է ազգին: Ընչանք էսօր դուք քարոզեցիք, այսուհետև նօքաթեն էկաւ մեզի. կամ փոխէք ձեր քարոզի կերպը և կամ լսէք մեզի: Արէք միանանք միասին գործենք. ուսման վախտը ուսումնասիրենք, աղօթելու վախտը աղօթենք, բայց երբ որ մեզի ուզենան պլազդ քուրդ ու Թուրքերը ճնասել, Թողանք մեր հիւսական յիմարութիւնը. դէնք առնենք գողի աւազակի հախից գանք: Դաշբուռունցիք մեզի օրինակ առնենք, նրանց պէս լինենք աղօթասէր ուսումնասէր, նրանց պէս էլ լինենք զօչաղ քաջ, որ մեր Թըշնամիները մեզ տեսնելու վախենան, մեզ չճնասեն: Գողի աւազակին սրով պատասխան տանք, գիտնակ իմաստուն մարդին խելքով ուսումով, Թէ չէ, միակերպ Ճալ, կնշանակի մի ոտով ման գալ, և էդպէս էլ մարդ չի կարող ճանապարհ գնալ տեղ հասնել:—

Ներողութիւն արէք տէր հայրեր, ես մի աշխարհական շատ չկարդացող մարդ եմ, մի՛ նեղացէք վրաս, իմացէք երբ որ ձշմարիտն եմ ասում, ընդունեցէք:— Մեր տէրութեան հնազանդ լինինք. բայց գողին ու աւազակին մեր ոյժը ու քաջութիւնը ցոյց տանք:

Ռուբէն Մեսրոպեանց.

Բժիշկ Ա. Բաբայեանի հաշիւը

Աղէքսանդրապօլու և Ախալցխայի պատուելի հայ հասարակութեանց.

Աղէքսանդրապօլ

Առաջին դասախօսութիւնից... ... ... 132 ռ.

Երկրորդ դասախօսութիւնը հրատարակուած էր ձրի. բայց հանդիսականներից մի մասը այս դասախօսութեան համար կամեցան ժողովել իրանց մէջ ... ... 83 ռ.

Ընդամենը 215 ռ.

Բոլոր ծախքը դասախօսութեանց համար ... ... 35 ռ.

Զուտ արդիւնքն է 180 ռ.

Ախալցխայ

Մի դասախօսութեան արդիւնք ... ... 50 ռ.

Ծախք ... ... — 7 ռ.

Զուտ արդիւնքն է 43 ռ.

Երկու դասախօսութիւններից զուտ արդիւնք մնայ 223 ռ.

Այս գումարը դասախօսը նշանակել է հետևեալ բարեգործական նպատակների

1) Տեղական լեզուներով ժողովրդ. առողջապահական գրուածներ հրատարակելու գործին . . . . . 110 ռ.*)

*) Այս գումարը յանձնուած է մեծ. պ. Աբգար Յովհաննիսեանին ինչպէս և իր առաջի օժանդակութիւնը այս գործի «Ուսումն. առողջ. հարցերի» արդիւնքը:

2) Մեծ. պ. Սեդրակ Մանդինեանցի ճառնապարհորդութեան Տաճկաստանի ուսումնարանաց վիճակը քննելու և մանկավարժական գործունէութեան կենդրոնատեղի ընտրելու գործին.100**)

3) Ախալցխայի ժողովուրդ ընթերցարանից 13.***)

**) Այս գումարը անմիջապէս պիտի փոխադրուի Դպրոցասիրաց-Արևելեան ընկերութեան պ. Մանդինեանին հասուցանելու ի Կ. Պոլիս:

***) Այս գումարը յանձնուած է Ախալցխա Տէր Կարապետ Տէր Գրիգորեանց:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 20-ին ներկայացրին Ամարայի թատրոնում «ՊԱՊՈ». գործ մեծ. պ. Գ. Սունդուկեանցի, որ յայտնի է Թիֆլիզի հայ հասարակութեան, ըստ որում շատ անգամ նա երևել է հայ բեմում և ընդունելութիւն գտել աւելի քան որ և է այլ տեղական պիեսաս:

«Պեպօյից յետ երկու քոյրք՝ օր. Հռոփէ և Սէրաֆո-ղ երգեցին դուէտ, երաժշտի ներդաշնակութեամբ և մեծ. պ. Հրաչեայ կարգաց մի յօդուած, իւր թարգմանութիւնը ֆրանսերէնից, որ ախորժ տպաւորութիւն գործեցին հանդիսականաց վերայ: Սոցա մասին մի այլ անգամ կ'խօսենք

***

Նիւ — Եօրքում կառավարութիւնը կարգադրութիւն է արել, որ քաղաքային պարտիզում եղող ոտիկանները հսկեն աղախինների և ծծմայրերի վարմունքի վերայ իրանց հոգացողութեան յանձնուած մանկանց հետ և եթէ նկատեն մէկի կողմից կոշտութիւն կամ անվայել վարմունք, նշանակեն այն աղախնի կամ ծծմօր անունն և տեղեկութիւն տան երեխանց ծնողներին: Երանի թէ մեր ոստիկանութեան պաշտօնեաներն էլ այն վիճակի մէջ լինէին, որ նրանց ևս այդպիսի պաշտօն յանձնել կարելի լինէր մեր Աղէքսանդրեան պարտիզում, ուր շատ անգամ աղախինների և ծծմայրիների անվայել և բարբարոսական վարմունքի վկայ լինում են նոքա և ամեն ոք:

***

Կ. ՊՕԼՍՈՒՄ կազմված է Պարզասէր Հայուհիների ընկերութիւն, որոյ նպատակն է հեռու մնալ ամեն չռայլութիւնից, մանաւանդ նորաձևութեան (մոդայի) կործանիչ մոլութիւնից, և օգնել ազգի բարոյական յառաջադիմութեան. Ամեն Հայուհի կարող է անդամակցել ընկերութեան. և պիտի վճարէ ամսական մի արծաթ դահեկան, բայց պարտաւորվում է կրելու պարզ Հայկական համազգեստ, որ երկու տարին մի անգամ պիտի փոփոխութիւն կրէ: Ընկերութեան հաւաքած փողը պէտք է գործ դնվի ազգի բարոյական կրթութեան համար: Ատենապետ է այժմ վ. իկտորիա Ք. Զելճեան:

***

Վերջին ժամանակ գրեթէ ամբողջ չաբաթ տեղ անձրևներն, որոնք մեծ տարածութեան վերայ տեղում էին, թէև կանաչացրին երկիրը բայց միևնոյն ժամանակ, ինչպէս շատ տեղերից գրում են, դժուարացրել են հաղորդակցութիւնը փչացնելով ճանապարհները:

***

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ գրում են.

Որ Անուշ նորոգեալ Լուսաւորիչ եկեղեցում կատարուել է առաջին պսակը, որ եղել է մեծ. պ. Յովհաննէսեանցի և օր. Հեղինէ Տէր Գրիգորեանցի: Այսպէս չուրեմն աւելի քան 500 տարի տեղ լուսթիւնից յետ կրկին լսվում է Անուշ եկեղեցում աստուածպաշտութեան ձայնը:

***

Խմբագրութիւնս յօդուտ Կիլիկեան և Դպրոցասիրաց—Արևելեան ընկերութեանց ստացաւ «Մշակի» խմբագրութենից եօթանասուն և եօթը ռուբլի 67 կոպ. որ մեծ. պ. Մ. Տէր Միքայէլեանցը ամառս հաւաքել է ԱՐԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՑ ԳԵՐԴԱՍՏԱՆ

Ընդունում է իւր մօտ պահելու ընդ ամենը երեք ուսանող: Ըստ ցանկութեան և առանձին վճարիւք ընտանեկան բժիշկը կ'այցելի երեխայոցը:

Կուկի, Նիկոլայեվսկայա ուլիցա, տուն № 50, ժամի 2 — 3:

3 — 4.

Բժշկապետ և խիրուրգ Գ. Ք. Ե. Ա. Ր. Ե. Ա. Ն. Ց. Ը, վերադառնալով արտասահմանից, ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 8—10 ժամը և 5—7 երեկոյեան: Աղքատները կարող են ձրի խորհուրդ ստանալ: Բնակարանն է Սոլոլակ, Սադովայեա փողոցում տ. Էֆէնդեանցի տանը № 56:

2 — 6

ԼՈՅՏ ՏԵՍԱՒ

,,ՓՈՐՁ"

ԱՄՍԱԳՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ (IX) ՀԱՄԱՐԸ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ I. Հայի խնդիր, ազգային վիպասանութիւն Պերճ Պռոշեանցի 2. դատաստանագիրք Մ. Գօշի, իրաւաբանական հետազօտութիւն. Վահան Վ. Բաստամեանցի. 3. Ալէքսանդրապօլից դէպի կարին, ձմրեռնային. 4. Հաւատ, յոյս, սէր բանաստեղծութիւն Գամառ — Քաթիպայի. 5. Ուսուցչական ժողովներ և մանկավարժական գրազրանութիւններ, դասախօսութիւն Պ. Գ. Ժոստ փարիզի աչխարհահանդիսի ժամանակ. 6. Նամակ Ս. Նազարեանցի մասին, Ս. Շահազիզեանց. ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. 7. Ծրագիր բարենորոգմանց կարին նահանգի. 8. Գեներալ Յովհաննէս Լազարեանը կարինում Ա. Երիցեան. 9. Նամակներ խմբագրին. 10. Յայտարարութիւն.

Ստորագրուել կարելի է Տփխիսում «Փորձի» խմբագրատանը և կեդրոնական գրավաճառանոցում. Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով. — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ»

Խմբագիր—հրատարակիչ
Աբգար Յովհաննիսեան.

4 — 5.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ԹԻՖԼԻԶՈՒ ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ-ՆԵՐՈՒՄ

Русское Слово—Դասագիրք ռուսերէն լեզուի, աշխատասիրութիւն Կամսար Տէր-Դաւթեանցի, երկրորդ տպագրութիւն: Գինն է 40 կոպէկ: Ձանապարհի ծախսը առնողների վերայ է: Գումարով առնողներին մեծ զիջումն կը լինի, եթէ դիմեն ուղղակի աշխատասիրողին այս հասցէով.

Тифлисъ.
Камсару Тер-Давидянцъ,
Въ магазинѣ Бр. Абовьянцъ
на Михайловскомъ мосту.

3 — 5

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 21-го СЕНТЯБРЯ 1879 г. Типографія Амб. Энфіаджянцъ и К-о

Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանց.